ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/21

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/26-1/10820-17 գրությամբ «Սաքի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1734 գրության հիման վրա, 15.06.2017թ. թիվ 03/26-1/10820-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սաքի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Սաքի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սաքի» ՍՊԸ-ն 28.06.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/48» (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որին գնային առաջարկ են ներկայացրել թվով 8 մասնակից, այդ թվում նաև «Սաքի» ՍՊԸ-ն, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

26.04.2017թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Սաքի» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընկերությունը սահմանված ժամկետում Ընկերության պաշտոնական «saqiam@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեից ծանուցման մեջ նշված «t.abrahamyan@mil.am» պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ «pdf» և «jpg» տիպի ֆայլերով:

Ընկերությունը գրությանը կից ներկայացրել է «saqiam@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեից «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստին որակավորման փաստաթղթերն ուղարկելու փաստը հավաստող՝ «saqiam@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպումը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ անտրամաբանական և անիրատեսական է Ընկերության կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո ծանուցման մեջ նշված փաստաթղթերը չներկայացնելը, քանի որ չներկայացնելու պարագայում

Ընկերությունը կզրկվեր գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից և դա բնականաբար չէր բխում Ընկերության շահերից, ընդ որում՝ Ընկերությունը մինչ այժմ նմանատիպ որևէ խնդիր չի ունեցել և բարեխիղճ կատարել է պատվիրատուների բոլոր պահանջները:

Ընկերությունը նշել է, որ եղել են դեպքեր, երբ ինտերնետ կապի տատանումների հետևանքով (որոնք հաճախակի են պատահում և հանդիսանում ոչ թե Ընկերության, այլ տեխնիկական բնույթի խնդիրներ) Ընկերության կողմից ուղարկված ֆայլերը երբեմն չէին հասնում հասցեատիրոջը, սակայն Ընկերության էլեկտրոնային փոստի ուղարկված նամակներում դրանք փաստացի առկա էին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 12:00-ի և 30.06.2017թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, 30.06.2017թ. ժամը 12:00-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1734 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/48» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել թվով 8 մասնակից, այդ թվում՝ «Սաքի» ՍՊԸ-ն, որը գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

26.04.2017թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Սահմանված ժամկետում «Սաքի» ՍՊԸ-ի կողմից պահանջվող

փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է տվյալ չափաբաժինների մասով մերժել Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 12:00-ի և 30.06.2017թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/21 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/21 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/48» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սաքի» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սաքի» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ կետով սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով **26.04.2017թ.** ծանուցել է «Սաքի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Սաքի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. «Սաքի» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին ներկայացվել է «saqiam@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջից քաղվածք, որի համաձայն նշված էլեկտրոնային փոստից 27.04.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստին ուղարկվել են հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/26-1/10820-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1734 գրությունը և կից փաստաթղթերը, «saqiam@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը

հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.5 ենթակետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի

պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ t.abrahamyan@mil.am, է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/48» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սաքի» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ կետով սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 26.04.2017թ. ծանուցել է «Սաքի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով «t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Սաքի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացվել է «Սաքի» ՍՊԸ-ի «saqiam@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպումը, որի համաձայն՝ նշված էլեկտրոնային փոստից ***27.04.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի***

«t.abrahamyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցեին Ընկերության կողմից ուղարկվել են համապատասխան փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ «Սաքի» ՍՊԸ-ն առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, կատարել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/48» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Armeps համակարգի ոչ ավտոմատ եղանակով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո (26.04.2017թ.) սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օրվա ընթացքում)՝ ***27.04.2017թ.*** ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Այսպիսով՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/48» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը սույն հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2017թ. թիվ 03/26-1/10820-17 գրությամբ «Սաքի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09213482) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ